Ա. Լ. ՅԱԿՈԲՍՈՆ

Կյանքից հեռացավ պատմական գիտությունների դոկտոր Անատոլի Լեոպոլդովիչ Յակոբսոնը, թողնելով գիտական հարուստ ժառանգություն, այդ թվում հայ արվեստի ու ճարտարապետության վերաբերյալ։

Նա ծնվել է 1906 թ. օգոստոսի 22-ին Լենինգրադի մարզի Լուգա քաղաքում, անտառագետի ընտանիքում։ Միջնակարգ կրթությունը Մոսկվայում ավարտելուց հետո 1922 թ. ընդունվել է Մոսկվայի առաջին պետական համալսարանի ֆիզիկա-մաթեմատիկական ֆակուլտետը, ապա փոխադրվելով Լենինգրադ, ուսումնառությունը շարունակել է այնտեղի համալսարանի լեզվագիտության և նյութական մշակույթի պատմության ֆակուլտետում, որն ավարտել է 1929 թ.։ Ուսման ընթացքում էլ առաջացել է Ա. Լ. Յակոբսոնի հետաքրքրությունը Արևելյան Եվրոպայի և Անդրկովկասի նյութական մշակույթի պատմության նկատմամբ։

Տակավին ուսանող, նա 1925—1927 թթ. մասնակցել է Հին Ղրիմում, Սուդակում և Խերսոնեսում գործող հնագիտական արշավախմբերի աշխատանքներին։ Ն. Մարի և Հ. Օրբելու գիտական դպրոցն անցած երիտասարդ գիտնականը միևնույն ժամանակ մեծ հետաքրքրություն է ցուցաբերել Հայաստանի նյութական մշակույթի նկատմամբ։ Առաջին անգամ նա 1929 թ. Հայաստան է եկել Հ. Օրբելու գլխավորած արշավախմբի կազմում, իսկ 1936 թ. նրա ղեկավարությամբ մասնակցել է Ամբերդի պեղումներին։

Սկսած 1930 թ.՝ Ա. Լ. Յակոբսոնը աշխատել է Լենինգրադի նյութական մշակույթի պատմության պետական ակադեմիայում (հետագայում՝ ՍՍՀՄ ԳԱ Նյութական մշակույթի պատմության ինստիտուտ՝ ИИМК), հաջորդաբար զբաղեցնելով գիտատեխնիկական աշխատակցի, կրտսեր և ավագ գիտական աշխատողի պաշտոնները։ Այդպիսով նրա գիտական գործունեությունը ավելի քան կես դար ընթացել է Սովետական Միության այդ փառաբանված գիտական օջախում։

1941 թ. Ա. Լ. Յակոբսոնը պաշտպանեց դիսերտացիա, հայցելով պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան։ Մինչ ծրագրվում էին նոր գիտարշավներ դեպի Հայաստան, սկսվեց Հայրենական մեծ պատերազմը։ Պաշարված Լենինգրադում նա մասնակցեց հարազատ քաղաքի հերոսական պաշտպանությանը, դրսեղից հիվանդ ու հյուծվածների թվում նա 1942 թ. էվակուացվեց Թիկունք, Իվանովո քաղաքի հիվանդանոցը։

Ապաքինվելուց հետո նա աշխատանքի անցավ ИИМК-ի Մոսկվայի բաժանմունքում, իսկ 1945 թ. փոխադրվեց նույն ինստիտուտի Լենինգրադի բաժանմունքը, ուր շուրջ չորս տասնամ-

յակ շարունակեց արդյունավետ գիտական գործունեություն մինչև կյանքի վերջը։ Այդ բոլոր տարիներին նա մասնակցել է տարբեր գիտական արշավախմբերի, մեծ մասամբ Խերսոնեսի պեղման աշխատանքներին։ Որպես դրանց հանրագումար, նա շարադրեց իր «Միջնադարյան Խերսոնես» մենագրությունը, որի համար 1961 թ. արժանացավ պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանին։

Ն. Տոկարսկուց հետո Ա. Լ. Յակոբսոնը առաջիններից էր, որ խիզախեց միջնադարյան հայ ճարտարապետության զարգացման ընդհանրական շարադրանքի փորձ կատարել, ամփոփելով այն 1950 թ. լույս տեսած «Ակնարկ Հայաստանի V—XVII դդ. ճարտարապետության մենագրու-

թյան մեջ, որն իր դրական դերը կատարեց գիտական շրջանակներում հայ ժողովրդի ճարտարապետության ժառանգության պրոպագանդման գործում։ Նույն նպատակին ծառայեց նրա աշխատությունների շարքը՝ նվիրված միջնադարյան Հայաստանի վանքային համալիրներին, Ղրիմի թերակղզու հայկական հուշարձաններին, հայկական խաչքարերին և այլն։

Տիրապետելով խոր գիտելիքների ու վերլուծական համակողմանի ամփոփումներ կատարելու արվեստին, Ա. Լ. Յակոբսոնը իր գիտական ողջ գործունեության ընթացքում կարևոր նշանակություն է տվել ճարտարապետական կապերի, տարբեր երկրների ճարտարապետության ընդհանրությունների, փոխազդեցությունների ու փոխհարստացման հարցերին։ Դրանց են նվիրված նրա «Հայաստան և Սիրիա. ճարտարապետական համադրություններ» (1975 թ.), «Հայաստանի և Վրաստանի միջնադարյան ճարտարապետության փոխհարաբերություններն ու փոխադարձ կապերը» (1970 թ.), «Հայաստանի և Բյուզանդիայի վաղ միջնադարյան ճարտարապետության փոխհարաբերությունները (1973 թ.), «Կովկասյան Աղվանքի և Հայաստանի ճարտարապետական կապերը» (1977 թ.), «Բուլղարական միջնադարյան ճարտարապետության ուսումնասիրման առթիվ» (1968 թ.), «Բալկանների. Արևելյան Եվրոպայի, Անդրկովկասի և Միջին Ասիայի միջնադարյան ճարտարապետական օրինաչափական մի քանի առանձնահատկությունները» (1972 թ.), «Միջնադարյան ճարտարապետության զարգացման մեջ օրինաչափության պրոբլեմը» (1982 թ.) աշխատությունները։

Ճարտարապետական կապերի ու ընդհանրությունների պրոբլեմի ուսումնասիրման հանրագումարը եղավ նրա «Վաղ միջնադարյան ճարտարապետության զարգացման պրոբլեմները» մենագրությունը (1983 թ.), որում վաղ միջնադարյան (V—VII դդ.) ճարտարապետության զարգացման օրինաչափությունները հեղինակը քննարկում է լայն ընդգրկմամբ, քրիստոնեական աշխարհի՝ մերձմիջերկրածովյան երկրների (Բյուզանդիա, Հունաստան, Իտալիա, Փոքր Ասիա, Սիրիա, Պաղեստին) ու Անդրկովկասի (Հայաստան, Վրաստան) ճարտարապետության վերաբերյալ բազմահարուստ նյութերի բաղդատման և զուգահեռ վերլուծման միջոցով։ Գիտնականի հիմնական եզրահանգումն այն է, որ անկախ ոճական տարբերությունից, որն արդյունք է ճարտարապետական արվեստի ձևաստեղծման զուտ ազգային մտածելակերպի, բովանդակ քրիստոնեական աշխարհում եկեղեցական ճարտարապետությունը (այդ թվում նաև Հայաստանի ու Վրաստանի), զարգացել է ենթարկվելով մի համընդհանուր օրինաչափության՝ բազմաթիվ ձևերից անցնելով գմբեթավոր տարբերակների։

Ա. Լ. Յակոբսոնի տեսադաշտում մշտապես գտնվել են հայ արվեստին ու ճարտարապետությանը նվիրված աշխատությունները, որոնց մասին նա հանդես է եկել բազմաթիվ գրախոսություններով՝ ցուցաբերելով գիտնականի բարձր խիղճ, անկանխակալ վերաբերմունք ու գիտական ճշմարիտ դիրքերից քննադատելով առանձին աշխատություններում տեղ գտած հայ ճարտարապետության ու արվեստի պատմության աղավաղումները։

Հարուստ է Ա. Լ. Յակոբսոնի գիտական ժառանգությունը նաև հնագիտության մարզում։ Դրան են նվիրված նրա «Վաղմիջնադարյան Խերսոնեսը» (1959 թ.), «Միջնադարյան Ղրիմը» (1964 թ.) մենագրությունները, առանձին աշխատությունները՝ նվիրված Անտիկ Խերսոնեսի և Օրենկալայի (Ադրբեջանական ՍՍՀ) պեղումներին, որոնց նա մասնակից է եղել երկար տարիներ։

Մինչև իր բեղմնավոր կյանքի վերջը Ա. Լ. Յակոբսոնը շարունակում էր զբաղվել հայկական հուշարձաններով, մնաց նրանց լավագույն գիտակը։ Վերջին տարիների ծանր հիվանդությունը հնարավորություն չտվեց գիտնականին նորից այցելել Հայաստան, մասնակից դառնալ հայ արվեստին ու ճարտարապետությանը նվիրված համամիութենական գիտաժողովներին ու միջազգային սիմպոզիումներին։ Դրանց նա արձագանքեց հեռակա կերպով, ուղարկելով իր չկայացած զեկուցումների տեքստերը, որոնք հրապարակվեցին։

Ա. Լ. Յակոբսոնն իր կյանքն ապրեց գիտությանը բոլորանվեր ծառայելով, որի համար արժանացավ հարգանքի ու բարձր գնահատականի։ Դրա լավագույն ապացույցը հանդիսացավ «Աշխատանքային կարմիր դրոշի» շքանշաններով, մեդալներով ու ծննդյան 75-ամյակի առթիվ (1981 թ.) Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի պատվոգրով պարգևատրվելը։

Ճարտարապետության դոկտոր Վ. Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ